

և և մահու պայքարի մէջ է Պաղտատի Խա-  
լիֆայութեան հետ :



Այժմ դարձեալ Տարարին է որ կը  
պատմէ :

Հարուն ալ-Ռաշիդ Խալիֆային որդին՝  
ալ-Մամուն, որ երկար ատեն կռուեցաւ  
Բարակի դէմ՝ կը մեռնի, և իր տեղ Խա-  
լիֆա կ'ըլլայ իր եղբայրը՝ ալ-Մուտա-  
զիմ, 833ի Օգոստոս 10ին :

Այս ալ-Մուտազիմ Խալիֆան կը կոչ-  
ուէր Ապու Իսհակ, և այս անուամբ ծա-  
նօթ էր Վարդան պատմիչին, որ կը գրէ .  
«Մեռաւ Մամուն, և առ գիշխանութիւնն  
Արուսահակ եղբայր նորա» (էջ 79) :

Ալ-Մուտազիմ հաղիւ 835ին կրցաւ իր  
ուշադրութիւնը դարձնել Բարակի վրայ :  
Տարարի կը գրէ որ այդ տարի՝ ալ-Մու-  
տազիմ Բարակի դէմ զրկուած բանակին  
հրամանատար նշանակեց ալ-Աֆշին Հայ-  
տար իպն Քաուս, մեր պատմիչներուն  
Ափշինը, որ 835ի Յունիս 3ին Պաղտատի  
մօտ բանակեցաւ, անկէ դէպի Բարդանդ  
ճամբայ ելլելու համար : Բարդանդ՝ թաւ-  
րիզէն հիւսիս-արեւելք՝ Ատրպատականի  
մէջ կը գտնուէր, Արդէբիլէն 14 փարսախ  
հիւսիս : Բարակ այդ կողմերը կը գտնուէր  
817էն ի վեր, և կեդրոն ընտրած է ալ-  
Բադ քաղաքը, որուն գաւառը Ատրպա-  
տականի և Արանի ( Աղուանք ) մէջ կը  
գտնուէր, սահմանակից Արաքս գետին :  
Ալ-Մուտազիմ, իր զահակալութեան ըս-  
կիզրն իսկ, Արդէբիլ զրկած էր Ապու Սա-  
յիտ Մուհամադ իպն ալ-Եուսուֆը, որ  
Բարակէն քանդուած ամբողջիւնները,  
Արդէբիլի և Զանճանի միջև, վերստին  
կառուցուին և ճամբան պահակ դրուի :  
Ապու Սայիտ, ինչպէս նաև ուրիշ արար  
հրամանատար մը՝ Մուհամադ իպն ալ-  
Բայիտ, ըստ Տարարիի, նախնական յա-  
ջողութիւններ ունեցան Բարակի այս ու

այն հրամանատարներուն դէմ, թէև Ես-  
պուպի համաձայն չէ Տարարիի :

Երբ ալ-Աֆշին Բարդանդ հասաւ, Բա-  
րակ դեռ խոշոր սպանալիք մըն էր Խա-  
լիֆայական տիրակալութեան այս կող-  
մերը : Երկիրը անհանդարտ, ճամբաները  
սլտանգաւոր, ապահովութիւնը անոյ :  
835ին ալ-Աֆշինի և Բարակի միջև ընդ-  
հարում մը տեղի ունեցաւ : Տարարիի հա-  
մաձայն, Բարակ պարտուեցաւ և 1000ի  
չափ սպաննուած տալէ վերջ՝ Մուզան ա-  
պաստանեցաւ, հաւանաբար դարձեալ Ա-  
մարաս : Նոյն տարին ալ-Մուտազիմ օլ-  
նական ոյժ զրկեց և բանակին համար՝  
դրամ՝ ալ-Աֆշինի թուրք հրամանատար  
Բուդա ալ-Գարիբի (Երէց) հետ :

Վերջապէս երկար ճգաւ մարտնչումը  
ալ-Աֆշինի և Բարակի միջև : Մենք հոս  
չենք ուղեր Տարարիի տուած երկար ման-  
րամանութեանց արձաղանդ ըլլալ : Վեր-  
ջապէս յուսահատ դիմադրութենէ մը  
վերջ՝ Բարակ կը պարտուի, իր հետե-  
ւորդներուն բանակը կը ջարդուի ու կը  
ցրուի, և ինք մագապուրծ կ'ըլլայ, և  
ինչպէս որ Տարարիի իմ տուած թարգմա-  
նութեանս սկիզբի մասին մէջ տեսանք,  
Բարակ իր երկու եղբայրներուն՝ Ապու Ալ-  
լահի և Մուալիխայի, իր մօր և մէկ կնոջ  
Իրնա ալ-Քալանդանիայի հետ Հայաստան  
(Սիւնիք) կ'ուզէ ապաստանիլ և այդ ուղ-  
ղութեամբ ճամբայ կ'եւլէ, հաւանաբար  
անկէ ալ Բիւզանդիոն ապաստանելու հա-  
մար :

Իպն Խարուն Բարակի հետ փախչող  
կնոջ մասին չի խօսիր : Ոչ ալ Տարարիի  
տուած անունը մեզ կը լուսարանէ թէ  
Բարակի կիներէն ո՞րն է որ այս պատիւին  
կ'արժանանար : Կարելի է խորհիլ որ այս  
Իրնա ալ-Քալանդանիան ըլլար նոյնիսկ  
Վասակ Սիւնիի աղջիկը, որուն հետ ա-  
մուսնացաւ Բարակ, որ կրնար Սիւնիքի  
մէջ իր ամուսնոյն փրկութեան օժանդակ  
ըլլալ :

Մենք տեսանք որ Բարակ և իր ձեղբայր-  
ները, մայրը և կիներ, իրենց հետեւորդ-